






ՍՈՒՐԷՆ Դ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՎԵՐՋԱԼՈՅՍԻ

ՀՇՇԻԻՆՆԵՐ

II.




1909

A $\frac{I}{13892}$

СЕРТИФИКАТ № 4

№ 4



Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

Ձեմ գիտեր ինչ տեսակ ներքին ուժ մը զիս,
Գէպի քեզ կը մղէ ազուոր սիրունիս .

Է՛հ, կրնայ ըլլայ համակրիլ ու սիրել .

Բայց այս աստիճան, չ'եմ կրնար պատմել :

Գիշեր ու ցերեկ՝ քուն ըլլամ թէ արթուն,
Իմ դիմացս միշտ քեզ կը տեսնեմ կանգուն,

Ժպտալից դէմքդ միշտ կ'երևակայեմ .

Ու սրտիս խորէն «Ախ» մը կ'արձակեմ :

Քու անունդ ալ եթէ երբէք ես լսեմ,

Կամ գրքի մը ու լրագրի մէջ տեսնեմ,

Ո՛հ, այն ատեն ես ամէն ինչ կը մոռնամ,

Ու քեզ միայն յիշելով ես կ'ուրախանամ :

Գիշերներն ալ երախտ մէջ սպուորը՛ս,

Պազ անկողնիս մէջ միայն քեզ տեսնեմ քովս,

Քու փափկակազմ նաբը թևերովդ զիս գրկած

Կարծես մէկ սրբա ու մէկ հոգի ենք եղած :

Ո՛հ, կարճեմ բառ է այսքան սէր, գորով,

Ձոր ես կը տածեմ իմ բոլոր սրտով .

Քանի որ քեզմէ զատ չ'ունիմ խոկմունք,

Ելլ միայն դուն ես իմ սրտիս գրազմունք :

Ե՛կ, մխիթարէ՛ զիս սիրո՛ւն տատրակ,

Եկո՛ւր, ու յուզէ՛, սիրտս զերդ Արուսեակ,

Երկուքս իրարմով հրճուինք, միանա՛նք,

Ճշմարիտ կ'ըսեմ և ոչ թէ պատրանք :

206

Առաւօտեան Արշալոյսին է նման
Քու զէմքիդ տեսքն աննման ,
Իբրեւ ծածկոյթ սպգ զեղօրին լուսնկայ
Մնտաքսաթիւն չի սք մը կայ :

Խորհրդաւոր , անուշ աչքերդ փառփառն
Սեւ յոնքերուդ տակ թաղուն ,
Պլպլուն աստղեր՝ անշէջ , անմահ ու միշտ վառ
Քու զէմքիդ վրայ սպայմառ :

Խնձոր սյուէրդ ալ կտակարմիր՝ որոնց վրայ
Միշտ անմեղ ժպիտ մը կայ՝
Գարնանային հոտաւէտ զօրդ մը վարդեր՝
Սրտնք զեւ նոր են բացուեր :

Գորովանքի ու ջերմ սիրոյ խանդակաթ
Անուշ ակ մէջ քու բերանդ .
Սեբկէ ծորին սէր ու գորով անրնդ հաս
Դեղձանիկի մը նման :

Ալ կը բաւէ կարծեմ այսքան սրժանիք
Ու այսքան զեղեցկութիւն ,
Քեզ կը մնայ լաւ գործածել այս բարիք
Զոր տուտա Արարչութիւն :

Մարտ 27, 1909, Կ. Պոլիս

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՆՈՒՄԻ ԿԵԼԵՐ

Չա՛յն չկար, ճնւթ գիշեր էր,
Ամէն կողմ լուս, սառ ու ձիւն,
Հազիւ քանի մ'անցորդներ,
Կը շտապէին դէպի տուն:

Ոտքը բռայիկ կուրծքը բաց,
Ճամբուն վրայ, պատին քով,
Խեղճ տղայ մ'պատահո մը հաց,
Կը մտբար գողգողով:

«Անօթի եմ... կ'բսէր ան,
Ա՛յս ցուրտ օդին ես այստեղ
Ոչ ծնողք ունիմ ոչ պաշտպան,
Ախ, անցորդներ թից մը տեղ...»:

Այսպէս ձայնով մը նուազկոտ,
Կ'ուլար կարծես քան խօսէր,
Մինչ անցորդներ ալ տենդոտ,
Կը քայլէին անտարբեր:

Ու գիշերը մինչեւ լոյս,
Ան միս մինչակ կծկտեր,
Անցորդներէն կտրած յոյս,
Չիւնին վրայ ստուեր էր:

Հետեւեալ առտուն կանուխ,
Մեռելակառքի մը մէջ,
Դրած տարին մի նկուղ
Նետելու հո՛ն փոսին մէջ:

Դեռ անձանօթ աշխարհի
Ան խամրեցաւ, իրրեւ վարդ,
Ծնելով ազգաս բայց բարի
Գնաց երկինք իրրեւ զարդ:

Այսպէս ընտել տեղ չկայ .
 Հ'ս' աղքատին . այլ նկուղ .
 Պէտք չէ սպրի ան հիմայ .
 Այլ սիրտ մեռնի շատ կանուխ :

Ապրիլ 7, 1909 . Կ Պոլիս

ՆԿԱՐԻԳ ԱՌՁԵԻ

Նկարիդ առջև չքնաղ սիրուհիս,
 Ես ամէն գիշեր ննջելու պահուս,
 Կը ծնրադ բեմ ու կը յայտնեմ սրտիս
 Հաւատարմքը քեզ յաւէտ պաշտելուս :

Ես ամէն գիշեր ննջելու պահուս,
 Ուխտաւորի մը խօլ հաւատքին պէս
 Ինձ պարտք կը սեպեմ ո՛վ հրաշալի կո՛յս,
 Սրտիս հրայրքը քեզ յայտնել այսպէս :

Ուխտաւորի մը խօլ հաւատքիս պէս
 Գլուխս ծռած իմ կուրծքիս վրայ,
 Ջերմնուանդօրէն ինչե՛ր կ'ըսեմ ես . . .

Քու գեղեցկութեանդ, հեշտանքիդ վրայ
 Ու վերջին անգամ աչքերս քեզ յառած
 Կը խորհիմ երա՞զ մ'է թէ առեղծուած :

8-24 Սեպտ. 1909

ԶՈՅԳԻՆ ԵՐԳՈՒՄԸ

Ամառ օր մըն էր, խիստ տաք մի գիշեր,
 Հեռու... անտառին խիտ ծառերուն տակ
 Զոյգ մ'արու և էգ թե թևի մտեր,
 Կր սիրերդէին ձայնով մը ներդաշնակ:

Հեռու... անտառին խիտ ծառերուն տակ,
 Այն գիշեր գեփխու մը յուշիկ կը փչէր.
 Ու անոնց երգերն մեղմ ու ներդաշնակ
 Կը տանէր հեռուն դէպի վեր եթեր:

Լուսինն այդ գիշեր ամպերուն մջէն
 Դէմքը դուրս ցցած ապշած կը նայէր,
 Կարծես այդ զոյգին և իր նախանձէն
 Մերթ զինքն ամպերուն հաին կը պահէր:

Ու երկար պտեն այսպէս երգելով,
 Կնձնի մը ներքև հասան վերջապէս:
 Որուն շուրջ ծառեր փոքր հասակով
 Պար բանած էին վառ աստղերու պէս:

Նստեցան անոնք կնձնիին ներքև,
 Այնչ ոք չ'կար որ տեսնէր զիրենք,
 Շատ յոգնած էին անոնք հե ի հե,
 Որ մարած էին կարծես պահ մ'իրենք:

Երիտասարդը հագիւ թէ նստած,
 Սկսաւ սիրային մեներգ մը երգեց,
 Օրիորդն ձեռքն իր ձերքին մէջ տուած
 Մինչ իր քովն օրիորդն դողդղալ սկսեց:

Բայց երբ լմնցաւ երգը քիչ մը վերջ,
 Պատանին ազջիկն իր գիրկը առաւ,
 Ու համարյրներու տարափ մը անվերջ,
 Երկու կողմէն ալ տեղալ սկսաւ:

Պահ մը լուսթիւն... ս'ն, սնէութիւն...
 Բնու ձայն չկար երկուքն ալ նայնպէս,
 Շուններնին բռնած ինչ երանութիւն,
 Իրար պինդ գրկած ննջէին կարծես:

Պատանին քիչ վերջ կէս քուն կէս արթուն,
 Հարցուց աղջկան ձայնով մը մեղմիկ,
 — «Ճշմարիտ ըսէ՛, գիտ կը սիրես գուն,
 Ըլլայ մեզ վկայ լուսնակն սնուչիկ»:

Աղջիկը աչքերն ուղիղ վեր յայտած,
 Լուսնին նայեցաւ և երաններէն
 Խորանկ սարսառ մը փեթէն ձար պատած
 Անուշ մը ճծեց — «Այո կը սիրեմ»:

Եւ լուսնի շող մը իր դէմքին վրայ,
 Մասք վեր անկած պուսի՛նքս կ'ըսէր
 «Լուսնը զլլայ թող մեզի վկայ»,
 Մինչ պաղ դեպիւս մը լուչիկ կը փռէր:

Մայիս 2, 1909 Կ. Պոլիս

ԲԱՅ ՆԱՄԱԿ

Գեղեցութեանդ ամենեւին եւ չեմ բնաւ սիրահար .
Այլ իմ սիրտս դիւրազգած , ո՛հ իմ սիրտս քեզ կ'ուզէ ,
Ամէն վայրկեան , ամէն ժամ ու ամէն օր անդադար
Կ'ուզեմ տեսնել դէմքդ պայծառ , որ իմ սիրտը կը
յուզէ :

Բայց երէկ մինչ դու մինակդ կը շրջէիր նաւակով ,
Ե՛ս , պատուհանիս առջև կը խոկայի անխոտով ,
Հո՛ն , ծովեզերքն , կանանչ դաշտերն , ուր զացիր պտը-
տելու :

Ո՛հ , գէթ անգամ մը մտքէդ անցուցիր դու զիս անմեղու :
Նախանձէի՛ , նախանձէի՛ , նաւովարէն երջանիկ ,
Որ քեզ կը տեսնէր իւր դէմն ո՛վ չքնադ աղջիկ ,
Ներսս կը վառէր հուր մը անշէջ , հուր մը սիրոյ
մշտավառ ,

Ձէի կենար եւ հանդարտ , տեսնելու դէմքդ պայծառ :

Դիտակս առի ու նայեցայ հո՛ն , ծովեզերքը հեռո՛ւն .
Ոչ ո՛ք չկար , ոչ մէկ նաւակ , ոչ ալ դուն
Ու հովերուն ես հարցուցի որք մեղմ ու զով փչէին ,
— «Տեսա՞ք , հովե՛ր , իմ սիրուհիս , աղուոր աղջիկ մը
թանկագին :

«Տեսա՞ք անոր աղուոր ժպիտն , անոր յտակ ձայնն անուշ ,
«Ա՛հ , շո՛ւտ բէք թէ չէք ուզեր բնաւ ըլլալ աչքիս փուշ» ,
Ու հովերուն սրինգի նման անուշ երգերն ինձ հեզնանկ
մը կարծելով
Իսկոյն ելայ իմ տեղէս ուզեցի շուտ դալ քու քով :

Նաւամատոց եւ իջայ փութով նաւակ մը նատելու ,
Բայց նաւ չ'կար , ծովն փոթորկոտ , ալեկոծ .
Այիքները կը փաղխէին ծովափին վրայ քարերու ,
Տեղատարափ անձրև մը վերէն հոսէր մշտահոծ :

Ես մտազբազ անաղաղ կեցած էի հոն ցամաքն,
 Աւ հարցուցի այն աղեաց որք ուժգն ազի կուգային,
 — «Տեսա՞ք ալի՛ք, ձեր մէջ ծփուն փոքրիկ նաւակն
 ապիտակ,
 «Տեսա՞ք, անոր մէջ նստող աղջկան դէմքն երկնային» :

Աինչ ջուրի պող ալիք մը եկաւ սրսկել իմ վրաս,
 Եւ սրտաբեկ, յուսահատ, վերադարձայ պատուհանս :
 Որուն առջեւ ես նստած կը խոկայի անխառն,
 Աինչ դու մինակդ աղեաց մէջ կը ծփայիր նաւակով :

ՅուՆԻՍ 1, 1909, Կ. Պոլիս.

Գ Ի Շ Ե Ր...

Մինչ Արևուն յետին ճաճանչն լուսաչող,
 Կը փայփայէր հոծ ամպերու սեւ ամփոփ,
 Անճուն երկինքը կը զգենուր մառյլ քող,
 Հեռուն, հոն վերն, ամպերէն ալ փոփրացող :

Սորճրդաւոր այդ տաճարին վե՛՛ զմբէթ,
 Արուն վրայ կուտակուած են ժշուհներ,
 Յանկարծ կորչին, ցնդին, ցնորքներու պէս խենդ,
 Զի մեղմ սիւզ մը աշնանային՝ կը փչէր :

Մութ ամպերու սեւ կոյտերուն հետ մէկտեղ,
 Որք քշուեցա՛ն, զայցին երկինք՝ հոն ննջել,
 Կորսուեցաւ Արևն ալ ճաճանչազեղ,
 Եւ տեսարանն ալ սկսաւ շուտ մի՛նել :

Եւ Լուսինն որ հեռուէն անտարրեր,
 Տարտամ նշոյլ մ'իր դէմքին վրայ անբսուեր,
 Ներկայ կ'ըլլար այս անցքերուն նոյն գիշեր,
 Թանձր մութին մէջ հեազհետէ կը փայլէր :

Ու ա՛հա լոյս մը կը փայլի պսպղուն,
 Հոն՝ ուրիշ մը, հաս մ'ալ անդին ու այսպէս
 Դեռ անճամար ու բիւրաւոր ու անհուն,
 Երկնքէն վար կախուած կանթեղներու պէս :

Ժիշտ այդ պահուն թռչուններու մի երամ,
 Կը թռէր բարձրէն կը հեռանար մեր աչքէն,
 Ծնուողելով ուրախ գուարթ բիւր անգամ
 Ու մութին մէջ կորսուելով երկնքէն :

Ու այս՝ այսպէս ամէն գիշեր շարունակ,
 Եւ ամէն օր, ամէն տարի, ամէն դար,
 Կը կրկնուի ինչպէս Արևն լուսարձակ,
 Զի մայր բնութիւնն այսպէս վճռած է եղբայր :

Յուճիս, 10, 1909. Կ. Պոլիս

ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ԱՂՋԻԿԸ

Սովոր էր ան ամէն իրիկուն լեռ ելլել,
 Ջի մը հեծած, ճիւններու պէս սպիտակ,
 Խիզախաբար, տողեաի պէս անարգել,
 Ան կը կտրէր, կ'անցնէր լեռ ձոր ու տուակ:

Գիտէինք թէ ամէն իրիկուն երբ Արեւն,
 Լեռան գագաթն ծառերուն քով կը հանգչէր,
 Յիտ' տեսնէինք զինք՝ որ ճիթկնւոյ տերուն
 Իր կուրծքին վրայ խաչածնու դրած կ'արշաւէր:

Անոյշ ժպիտ մ'ունէր միշտ իր շրթանց վրայ,
 Ջոր անխնայ կը շնործէր մեզ իրը նուէր,
 Որուն համար ամէն օր ճամբուն վրայ,
 Խուան բազմութիւն մը կը սպասէր անձնուէր:

Ամէնուս մէջ փափաք մը կար անյագութիւն,
 Անոր հաճոյ երեւնալու, օրհնելու,
 Երբ ան կ'անցնէր վեհութեամբ մը միշտ անխոյթ,
 Անկէ աղւոր ժպիտ մը բնորունելու:

Մարդ չէր գիտեր թէ ուր կ'երթար, ի՞նչ լինել,
 Առասպելներ էին շինուած մասնաւոր,
 Բայց ամէնքն ալ կարող չէին համոզել,
 Սա ճիշդ էր թէ աղջիկ մ'էր խորհրդաւոր:

Իրիկուն մ'ալ երբ արելի լուսաչող
 Եկած էր հոն, լերան գագաթը արգէն,
 Ու կ'բազասէր կարծես յոյսով մ' մաշող,
 Ինքը կ'անցնէր դարձեալ գուարթ՝ փողոցէն:

Երբ լսեցի իր ձիուն տրոփունը անուշ
 Կարծես սիրաս զիս կը դրդէր հոն երթալ,
 Հոն, ուր կ'երթար աչդ աղջիկը մեկանուշ
 Չինքը տեսնել, խօսիլ իրեն հասկրնալ:

Յարդէ գլխարկ մը դրած էր ծաղկաւտ,
 Որուն շուրջը մետաքս մազեր կը ծլին
 Իրենց անուշ խոսքոսներով ու վէտ վէտ,
 Ծալքերովին կոճակներու կը նմանին :

Ամէն օրուան պէս ան ճերմակ էր հագեր,
 Ճերմակ էր իր բեհեզն ու իր շրջազգեստ,
 Ճերմակ իր կօշիկներ ու իր գուլպաներ
 Ներդաշնակութեամբ մը իրեն պէս համեստ :

Հետեկցայ ես հեռուէն հետիւտն,
 Անցաւ քլուրներ, դաշտեր, ձորեր ու սարեր,
 Մինչև հասաւ լեռան կատարն լճին մօտն
 Որուն ալիքը արեւն կը փայլէր :


Իջաւ ձիէն հասաւ կազնիի մը կապեց,
 Ինքն ալ նստաւ աչքերը վեր երկնքին,
 Ու քեզ վերջ պայծառ լուսինը ծագեց,
 Ան ծնրադրած հողակոյտի մը կուրծքին :

Երբ լսեցի իր մրմունջներն հուակ յետին,
 «Մ՛ի մայր անմահ՛, Աստուածամիտ սրբուհի՛,
 Ներէ՛ ինձի և միջնորդէ արարչին,
 Որ սիրելւոյս հաշտ աչքով մը թող նայի» :

Ջուր սրակելով գերեզմանին ծաղկաւտ,
 Խաչակնքեց, հանեց կուրծքէն կիթեւին,
 Դրաւ շիրմին խաչին վրայ ծածկի մ'հետ,
 Ու ձին նստաւ դղրդելով ան գետին :

Ալ անկէ վերջ ամեն իրկուն ես մինակ,
 Լեռան կատարը կ'երթայի լճին մօտն,
 Մինչև նա գար թռչտելով զերդ տատարակ -
 Եւ իր անոյշ ձայնով թ'դայնէր օգն :

Յունիս 6 է. Պոլիս 1909



ՊԱՐՏԷՉԻՆ Ա.Գ.ՉԻԿԸ

Կիրակի օր մ'էր, գարնան առաւօտ,
 Երբ արշալոյսը ծագեր էր արդէն,
 Ու պայծառ արեւն ջերմ ու կրակոտ
 Իր ճաճանչներով կը փայլէր վերէն:

Երկինքը անձն էն ծով մը կապուտակ,
 Ուր երբէք չկան ո՛չ նաւ ո՛չ ալիք,
 Այլ միայն տեղ տեղ ամպեր թխորակ,
 Որք շուտ կ'անձեափն հովին խաղալիկ:


Հո՛ն, պարտէզի մը հսկայ ծառին տակ,
 Ազուր արջիկ մը գանգուր մտղերով,
 Որուն վէտվխունն ծրփանքներուն տակ,
 Կը հանգչի դէմք մը շուշան այտերով:

Թիկնաթոտի մը վրայ ընկրդմած,
 Գիրք մ'ունէր իր ձեռքն զոր կը թղթատէր,
 Ու մերթ իր ծաւի աչքերը բացած,
 Պարտէզին դրան պիչ պիչ կը նայէր:

Չիւնի պէս ձերմակ իր վզէն կախուած,
 Արծաթեայ խաչ մը ունէր ոսկեզօծ,
 Որուն մետաքս, նուրբ թելին վրայ շարուած
 Մարգարտի հատեր կային հո՞ւ առ հո՞ւ:

Իր նայուածքին մէջ անուշ բան մը կար,
 Խանդ մը, ախն մը, և լոյս մը ցայտուն
 Իր աչքերուն մէջ ծաւի կը ցոլար.
 Վառ աստղերուն պէս երկնքին անձն էն:

49 Յուլիս 1909



[504]

A $\frac{T}{13899}$





